ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

Ք. Սևան

19.09.2018թ.
Ժամը 15:30

Հանձնաժողովի նախագահ՝ Մարի Սիմոնյան

Անդամներ՝ Վարդուհի Վարդանյան

Մարիաննա Առաքելյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/3 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին
(Մ. Սիմոնյան)

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
2.1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին:
3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:
4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին.
(Մ. Սիմոնյան)

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի եզրակացության համաձայն <<**Զորաշեն**>> **ՍՊԸ**-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացված գնային առաջարկից: Հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.

(Մ. Սիմոնյան)

2.1 <<Զորաշեն>> ՍՊԸ-ի կողմից ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և հայտով առաջադրված ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվել է սույն հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

2.2 ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին <<Զորաշեն>> ՍՊԸ-ի ներկայացրած ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է սույն հրավերի պահանջներին:

2.3 <<**Զորաշեն**>> **ՍՊԸ**-ն հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Մ. Սիմոնյան)

3.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:

(Մ. Սիմոնյան)

4.1 Ելնելով վերոգրյալից հանձնաժողովը որոշեց ՍՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-18/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝

<<**Զորաշեն**>> **ՍՊԸ**-ին-1-ին չափաբաժնով

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Վ. Վարդանյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան